# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<19>> դեկտեմբերի 2016թ. N 117

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.6-րդ կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016թվականի դեկտեմբերի 6-ի N 01/15.1/5399 - 16 հանձնարարականի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բոլոր համայնքներում, տնտեսություններում և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններում առկա անասնագլխաքանակի համատարած հաշվառման աշխատանքները 2017թվականի հունվարի 1-ից մինչև 17-ն ընկած ժամանակահատվածում իրականացնելու նպատակով

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին /Գ.Գաբրիելյան/՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության Արմավիր մարզային գործակալության աշխատակիցներին և համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:
3. Հանձնաժողովին /Գ.Գաբրիելյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն ավարտել 2017թվականի հունվարի 20-ին և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզպետի*
*2016 թվականի դեկտեմբերի 19-ի*
*N17-կարգադրության*

**ԿԱԶՄ**

Հանձնաժողովի նախագահ՝- Գ.Գաբրիելյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ

***Անդամներ՝***

Մ. Սարիբեկյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Կ.Պետրոսյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Ս.Մխիթարյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ